

## Օֆելյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

### ԿԻՆԸ ԳԱՎԱՌԱՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Գավառահայ կնոջ խնդիրն արդին XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակներին ամենահասունացած, հրատապ լուծումներ պահանջող խնդիրներից էր արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում, որին անդրադարձան այդ շրջանի տասնյակ գործիչներ (Հրանդ, Վահան Մանվելյան, Հայկանուշ Մարք, Արփինե Նահապետյան, Արաքս Խորովենց, Արտեմի Մելքոնյան և ուրիշներ):

1900թ. Ֆիլիպեի Ազգային վարժարանում կարդացած դասախոսության մեջ (հրատարակել է «Ուազմիկ» շաբաթաթերթում, № 92-94) Վահան Մանվելյանն իր խոսքն սկսում է Մանքեկացցայի հետևյալ մտքի մեջրերումով. «Ազգի մը բարոյական և քաղաքակրթական զարգացման աստիճանը որոշելու միջու և ամենից ուղիղ շափր կարող է իմենի այն տեղը, որ այդ ազգը հատկացրել է կնոջը»:<sup>1</sup>

Գավառահայ իրականության մեջ հայ կնոջ կյանքը շղթայված էր ավանդույթներով ու սովորություններով, նահապետականության կապանքներով. Հայկական գավառները բաղկած էին խավարի ու տղիտության մեջ: Այնտեղ կյանքը տնօրինում էին հարստահարությունները, կամայականություններն ու բիրու ուժը: Անմշխար էր կնոջ վիճակը գավառում:

Գավառում կինը խարիսավում էր տղիտության, հետամնացության, խավարի ծանր մղձավանջում: Անսպառ ընդունակություններով օժտված հայուհին հնարավորություն չուներ ուսանելու: Նրա կյանքը հաճախ տնօրինում էին բիրու ուժն ու անսանձ կամքը՝ պատճառ դառնարվ գավառում հաճախակի պատահող երջանիկ միությունների փլուզման, երիտասարդ ճակատագրերի կործանման: Գավառացի այրերը կնոջը նայում էին սոսկ որպես սեփականության, նյութական սուացվածքի, որն իրավունք չուներ ընդդիմանալու տան զիսավորի կամքին ու ցանկություններին, դատապարտված էր ապրելու որպես կիսաստրով, որի զգացմունքները կարող էին ճզմել ու բռնադատել: Զերմեռանդ հավատացյալ էր գավառահայ մամիկը՝ մեծ հավատով փարված եկեղեցուն, ազգային ավանդույթներին ու սովորույթներին: Հաճախ նրա սնութիապաշտությունը, կույր հավատն առ սրբերն ու Աստված պատճառ էին դառնում ողբերգական իրադրությունների:

Ահա Օ. Զարդարյանն իր «Պուտ մը ջուր » ցնցող պատկերում<sup>2</sup> նռայլ գույներով բացահայտում է Սուրբ Սարգսի հրեղեն ձիով քաջ գորականի գալստյանն սպասող, հրաշք երազներ տեսնելու ակնկալիքով ու երկյուղածությամբ համակված տասի ու բռան կյանքի ողբերգական էջերից մեկը, որը խորիդանշում է ժողովրդի կյանքը սևացնող անքափանց ու երկարատև խավարը, և որը պատճառ էր դառնում անմեղ հոգիների խեղման: Հայ մամիկը գավառում արմատացած ավանդույթների ու սովորությունների կենացնի շտեմարան է, որն իր ամբողջ մայրական գրովը՝ քաղցրությամբ ու բարությամբ շաղախված, կենտրոնացրել է գերդաստանի վրա:

Գավառում կինն ընտանիքի սյունն է, անխոնջ աշխատող է ու առաքին: Նա անհողող կամքով կարող է կյանքում բազմաթիվ փորձություններ հաղթահարել, չկորցնել ողու արիությունը բազում խութերի ու խոշոնդրուների հանդիպելիս:

«Հոգեղարձ» զգայացունց պատկերում նկարագրվում է մի այդպիսի հայուհու՝ Գյուլքարի հոգեղարձի տխուր պահը: Անուսնու բացակայության ընթացքում անվեհեր հայուհին տասնչորս տարի անընմեջ կոիվ է տվել ջավորության դեմ, կարողացել անասելի զրկանքներով ու տքնանքով մեծացնել փոքրիկներին, չկորցնել բարոյական վեհությունը: Խսկական հայուհու կերպար... Տասնչորս տարի անընկանելի հակատով ու անմար հույսով սպասել է ամուսնուն: Սահից հետո էլ կարծես «այդ անկենդան ու բաց աշերուն լույսը տարաշխարհներ քուած է՝ հոճ գումարու համար այն, զոր այս աշխարհին մեջ փնտող երկար տարիներ»:<sup>3</sup>

<sup>1</sup> Կ. Տ ո դ ր ա մ ա ճ յ ա ն, Նշանակներ, ֆիլիալ, 1907, էջ 177:

<sup>2</sup> Օ. Զ ա ր դ ա ր յ ա ն, Յայգալուս, Կ. Պոլիս, 1910, էջ 42-48:

<sup>3</sup> «Արևելյան մամուլ», Զմյուտմիա, 1905, N 17, էջ 46-60:

Ո. Զարդարյանը գավառի գաղտնածածուկ խոցերից մեկը պարփակոր քանձը վարագույրն է և նետ քաշում «Վա՛ն, ես մեռնեի» վիպակում<sup>4</sup> Խոգեբանական խորոշյամբ կերտելով ընտանիքին ու ամուսնուն անձնվիրաբար փարված պարկեշտ հայուհու կերպար: Հայկուի խաթունը օրերի դժնդակ հողովություն ճաշակել է կյանքի ու արհամարհիված վիճակի դատնությունները, համբերությամբ դիմակայել ամուսնու անհավատարմության դառը իրողությունը, իրարահաջորդ քշվառության ու կարիքի տարիներ է անցկացրել: Սակայն նահապետական բարքերով սնված գեղջկուհու հավատն անխախտ է ամուսնու վերադարձի հանդեպ, նա անվերապահորն ի հավատարիմ է ամուսնուն, իլու՝ ճակատագրի քմահաճույքին: Հոգեկան տվյալունքները, անլուր տառապանքները հայուհու հոգում չեն ծնել վրիժառության զգացում, բողոքելու, ընդգելու ցանկություն: Վիպակի գործողություններն ավարտվում են անսովոր ու անսպասելի հանգուցալրւծմամբ: Հավատարմության մեջ անսասան, բարոյական սկզբունքների մեջ անշեղ կնոջ արարքն իր ախտավարակ, մարդկանց ու եկեղեցու պարսականքին արժանացած ամուսնու դիմակի վրա տարօրինակ է թվում: Զայրակից ամբոխի առջև, որ պատրաստ էր քարկոծելու հարստությունն ու պատիկի կորցրած մարդու դիմ, Հայկուին փարվում է դիմակին դառնակմիծ ողբարյով: Բարոյապես ու ֆիզիկապես աղարտված ամուսնու հանդեպ հայ կնոջ նորմոքը վերաճում է սրտակեղեք հեծեծանքի: Այդպիսին է հայուհին: Նրա զգացմունքների խորությունը, անկապետի հավատն ամուսնու հանդեպ, առարինությունը կարող են դիմակայել պանդխսություն կոչվող զարինելի երևույթին:

Գավառում պանդխսությունը խաթարում է ընտանեկան ներդաշնակ համակեցությունը, ընտանիքների փլուզման պատճառ դառնում: Նունիկը պանդխսության գիրկը նետված ամուսնուն դավաճանում է նրա եղբոր՝ մի ժանտատեսիլ ու դժխտմ նարդու հետ, որը գրիկ է ամեն տեսակի սրբություններից: Ընտանիք վերաբարձած ամուսինն անկարող է տանել եղբոր ու կնոջ դավաճանության անզուր հարվածը: Մի՞թե կինն այդպիս պիտի վարձահատուց լիներ իր կրած տառապանքների դիմաց: Հուսալքված Սիմնը հեռանում է տամից, իսկ անրարոյականության ճահիճն ընկդմված Նունիկը դառնում է «արիկաներուն ստացվածքը»: Մյուժեի հովվերգական ընթացքի շարադրմամբ Թղկատինցին «Կնամա՞րտ թե՝ ցլանարտ» ստեղծագործության<sup>5</sup> մեջ արտացոլում է բարքերի հեղաքեկման սարսափը, կնոջ բարոյական կեցվածքի խաթարման պատկերը: Գավառի կանանց հոգեբանության ներսուզումներով մեծ գրագետն արձածում է բնաշխարի մարդկանց վարդուբարքի հացցեր:

Գեղամ Տեր-Կարապետյանի (Մշո Գեղամ) նորավեպերը, գրված «Պիմանկար նորավեպի» ներժանական կառուցյունում («Եղսիկին պարագան»),<sup>6</sup> «Սարգիս աղբարը»<sup>7</sup> և այլն, գուգահեռում են Տարոն աշխարիի գօլիսիչ բնապատկերները պանդխսության սոցիալ-բարոյական ավերների պատկերագրմանը: «Եղսիկին պարագան» պատկեր քրոնիկում հեղինակը ստեղծում է գրկանքի ու անհուսության տասնվեց տարի իր ամուսնուն անխախտ սիրով սպասող կնոջ կերպար:

ՈՒշագրավ են Ո. Զարդարյանի «Չղջում»,<sup>8</sup> «Սև հավը կանչեց»<sup>9</sup> գործերը, որոնցում վրձնելով բնաշխարի կյանքի տիպական պատառիկներ՝ հեղինակը բացահայտում է զավառահայ կնոջ պանդխսության անմիջական հետևանք հանդիսացող բարոյական անկումը:

«Անզգամության ու մեղքի տղմու լիճը» ընկդմված կնոջ բարոյական անկման պատմությունն է ներկայացնում «Չղջում» նորավեպը: Դեպքերի զարգացնան կիզակետում հայտնվում է կյանքի տփորական շավից մի կողմ նետված կիճը՝ Աննան: Պանդխսության ամենակործան ալիքն է սասանել նորատի կնոջ ընտանիքի հիմքերը, ամուսնուն խլել սիրակարոտ ձեռքերից ու դարձրել օտար ափերում դեգերող անպատճան խլյակ:

<sup>4</sup> Ո. Զ ա ր դ ա ր յ ա ն Ա մ շ ի ս, էջ 5-7:

<sup>5</sup> Թ է կ ա տ ի ն ց ի, Գ յ ո ւ ի ն կ յ ա ն ք ք, Ե ր ., 1966, էջ 171-191:

<sup>6</sup> Գ. Տ ե ր -Կ ա ր պ ա պ ե տ յ ա ն, Տ ա ր ո ն ի ա շ խ ա ր ի ք, Փ ա ր ի զ, 1931, էջ 88-90:

<sup>7</sup> «Արևելք», Կ. Պ ո լ ի ս, 1890, N 1943:

<sup>8</sup> Ո. Զ ա ր դ ա ր յ ա ն Ա մ շ ի ս, Յ ա յ զ ա լ ո ւ յ ս, Ե ր ., 1959, էջ 460-462:

<sup>9</sup> Ո. Զ ա ր դ ա ր յ ա ն Ա մ շ ի ս, Յ ա յ զ ա լ ո ւ յ ս, Կ. Պ ո լ ի ս, 1910, էջ 184-220:

Հայ կնոջ բարոյական աճելումն է բացահայտված նաև Ո. Զարդարյանի «Սև հավը կանչեց» պատմվածքում: «Ժամանակը ծանրությամբ, դանդաղությամբ ու սուգով կանցնի դարիքին տանը վրայեն: Պատիկները անհայր կը մեծնան, մայրերը կարուով կմեռնին, ու հարսները, եթե շուտով չեն ծերանար՝ կամ այս է, որ իրենց շնորթն ու գեղեցկորեննեն բան չեն պահեր ետքի օրերուն կամ բույլ ու վատասիրու զոնվերով՝ օտարին կծախեն իրենց ճահիմությունն ու սիրտը», - գրու է Ո. Զարդարյանը:<sup>10</sup>

«Սև հավը կանչեց» պատմվածքում անառակ հարսին հակառակած է մարմարիոնի պես մաքուր ու անքիծ հայ մոր կերպարը, որն անամոր վշտով հեծեծում է՝ օր ծերության ականատես լինելով անպատկան հարսի և ամբարիշտ ու բղջախոհ որդու հանցավոր կապին: Նա սրափության կոչ է հնչեցնում նահապետական կնոջ բարոյական վեհությունը կորցրած հարսին, փորձում փրկել երբեմնի շեն գերդաստանը «բրշակ» դառնալու վտանգից: Այդախին է հայ մայրը, որի անոնքը դարեր շարունակ սերունակների շուրջերին սրբությամբ է բրուացել:

Երտիսանի «Արյան ուժը»<sup>11</sup> պատկերը վեհաշուք, հայրենասիրական պարուսով լի գեղեցիկ ու նվիրական ձոն է՝ զավարի հայ կնոջը, մորը, մամիկն ուղղված՝ լեցուն անքարույց խանդաղատանքով, անսահման գորովանքով և այն աներեր հավատով, թե բոլոր դարերում և արհավիրքների ժամանակ հայոց տունը, ազգը չեն մեռել հենց հայ կնոջ շնորհիվ: Ստեղծագործության պատումն ամբողջապես կառուցված է հայ կնոջ կերպարի խորհրդանիշով:

Գաղրականության խորշակն օտար ափեր է նետել երեք փոքրահասակ «զածեր» իր շուրջը հավաքած մի պառակի, որը կարծես Հայաստանի խորհրդանիշն է: Նրա հայացքում բյուրեղացած է կործանված հայրենիքի կովկած, ավերակված օջախի մրմութը: Մուրացիկ կինը «անմոռնչ հերոս մըն է», քանի որ կյանքում նա ստացել է անագորույն հարվածներ, սակայն չի վիատվել, որովհետև կյանքում տեղ չկա հուսահատներին ու թերահավատներին: Կյանքը պայքար է: Իր վիշտը շալակած՝ մայրն համար փարզել է երեք որորուներին, պատրաստ է դիմագրավելու այլ փորձությունների: Գերդաստանի ապագա սյուներին ու վերջին ընճյուղներին անքակտելիորեն կապված մամիկից օտար մարդիկ ուզում են խլել երեխաներին: Բայց անպարտելի է մայրական սիրով զինավառված հայ կինը. «- Ոչ, - կնոնչե,- չեմ ի տար քոռներս»: Հետևում է հեղինակային գեղումը, որը մի սրանչելի գեղոն է հայ կնոջն առհասարակ. «Գավառացի այս խեղճ կնոյ թերանով ամբողջ ցեղի մը արյան ուժն է, որ երևան կուզա, ազգության զաղափարին կույր, անպատրվակ փարումը, վայրենորեն սուրբ այն խանդը, որ հայ կնոյ նկարագիրն իսկ է, և որ անհիշատակ դարերու, անցյալի բոհուրոիի մեջնեն ցեղը թերած հասուցած է մինչև հիմակ: Հայուհին իր արյան, միսին ու ուկորին ցերմորեն հայրենասիրական շաղվածքով հավատարին, անխոնջ և անշշուկ սատարն է եղած մեր ցեղային շենքին անխարիսար պահպաննանը՝ հսկա ցնցումներու, կործանող կարողություններու դեմ: ... Կնոյ այս կսեմ տիպարին առջև պաշտամունքով խոնարինք, վասնզի ան իր ծոցին մեջ անշենց պիտի պահեն հուրը, որ ազգերու կյանքը կապրեցնե»:<sup>12</sup> Ի դեպ, այսպիսի մոր կերպար ունի նաև Ո. Զարդարյանը «Ծուն մըն ալ պակաս» զգայացունց պատմվածքում:<sup>13</sup>

Գալացի աղջիկը գեղուն է զգացմունքներով, սակայն շիկնոտ է ու վարանու: Նա չի կարող արտահայտել իր զգացմունքներն ու ցանկությունները, շղթաված է նահապետականության կապանքներով, զրկված է կրթություն ստանալու հաճույքից և դպրոցն ավարտելուց հետո ստիպված է աշխատել ու օգնել ծնողներին:

Հրանդի (Մելքոն Կյուրծյան) «դիմանկար» նորավեպերում գեղարվեստական ուրվագիծը մամրամասնում է ստանում առարկայական դիմանկարներով, ինչպես, օրինակ, «Ժայտ կերպարանքը» նորավեպում է:<sup>14</sup>

<sup>10</sup> Ո. Զ ա ր դ ա ր յ ա ն ն, նշվ. աշխ., Կ. Պոլիս, 1910, էջ 184-220:

<sup>11</sup> Ե ր ո լ ի ս ա ն, նովելմետ, Եր., 1965, էջ 283-286:

<sup>12</sup> Նոյն տեղում, էջ 284:

<sup>13</sup> Ո. Զ ա ր դ ա ր յ ա ն ն, նշվ. աշխ., Կ. Պոլիս, 1910, էջ 111-121:

<sup>14</sup> Հ ր ո լ ի ս ա ն, Ամրողական երկեր, հ. Ա, Պանդոխսի կյանքնեն, Փարիզ, 1931, էջ 167-169:

Կեսարացի գործավորի ուշադրությունը միշտ զրավում է ժապտերես, բարեհամրույր Ակոր ապերը՝ ժրաքան, բարեխիղը ու անտրտունչ աշխատող, միևնույն ժամանակ՝ նուրբ ու զգայուն: Իրականում Ակորը կին է, անունը՝ Շուշան, որ ծայտված պանդրիստելով՝ հանապազօրյա հաց է վաստակում՝ որք քույրերին ու եղայրներին կերակրելու համար: «Մշեցի Շուշան մըն է, բնութենեն ու բաղդեն ընկեցիկ աղջիկ մը»: «Ի՞նչ ընեմ, տե՛ր հայր,- խոստովանում է նա քահանային,- մեր տան մեջ էլ կարիքության մարդ չի մնաց, քուլֆար ունիմ, քուրեր, աղբրտանք՝ զըմեն էլ հացի կարոտ: Ո՞վ պիտի կերակրե անոնց»: Ծշմարտացի է եղինակը՝ «Այո՛, քան մը պիտի ընե Շուշան: Պիտի փախչի աղ տեղերեն, այս անզամ որիշ դիմակ մը պիտի դնե և որիշ անվան տակ ծրաբե Շուշանին թերթերը»:<sup>15</sup>

Գավառական ողբերգության հետաքրքիր էջ է Փ.Խ.Բ. ստորագրությամբ «Ծաղկ» շաբաթաթերթում 1899թ. տպագրված «Հարսնեսոո՞ն, թե՞ սգատուն» պատմվածքը,<sup>16</sup> որի սյուժեն կյուսված է նոյն գյուղի երկու մանուկների՝ Մամասիկի ու Անքառամի՝ դեռ օրորոցում նշանելու փաստի պատմության հիմքի վրա:

Հանգամանքներն անակնեալ դիպվածներով խճճում են արդեն հասուն երիտասարդների սպասվող ամուսնության պատմությունը՝ ներկայացնելով սիրո անինանալի առեղծվածի մի ցնցող պատկեր: Նորավեպում սիրող անհատի զգացմունքները, հանգուցալուծման բնականն ելք չգունելով, նրան տանում են դեպի անխուսափելի կործանում: Աղջիկն անզոր է զրկել իրեն բռնությամբ պարտադրված ամուսնուն և միաժամանակ չի համարձակվում քանդել նշանը, քանզի աղջկա կամքը գավառահայ իրականության մեջ ոչ ոք չի հարցնում: Նորավեպը վերջակետվում է ողբերգությամբ: Հուսահատ անձկության մեջ ժայռից նետվելով՝ աղջիկն իր անարատ մարմինն հանձնում է Եփրատի ահեղագոշ ալիքներին:

## ЖЕНЩИНА В ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ ЗАПАДНОАРМЯНСКОЙ ПРОВИНЦИИ

*Резюме*

*O. Оганесян*

В провинциальной действительности Западной Армении жизнь армянки была в патриархальных цепях. Армянские провинции утопали во тьме и безграмотности. Там господствовали грубая сила и власть денег, власть имущих.

В статье выявляются грустные, порой трагические, иногда героические страницы жизни провинциалки, которой посвящены многие новеллы западноармянских писателей конца XIX и начала XX веков: Р. Зардаряна, Г. Тер-Каррапетяна, Ерухана, М. Кюорджяна и т.д..

<sup>15</sup> Նոյյմ տեղում, էջ 169:

<sup>16</sup> «Ծաղկ», N 37, Կ. Պոլիս, 1899: